

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՐՎԱՃՅԱՆԻ ԵՐԳԻԾԱՆՔԸ

(Ծննդյան 150-ամյակի առթիվ)

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ երգիծական գրականության զարգացման գործում անուրանալի դեր է կատարել Հ. Սրվաճյանը իր «Մեղու» հանդեսով: Ծիշտ է, նրանից առաջ մեր գրականության արևմտահայ հատվածում եղել են «Զվարճախոս» ծաղրաբանական շաբաթաթերթը (1855—1856 թթ.) և Թ. Կրկուկյան անհայտ հեղինակի «Ընդունելություն ընծայի» գրքուկը (1855 թ.), բայց դրանք, զուրկ լինելով հասարակական հնչողությունից, որևէ հետք չեն թողել գրականության մեջ:

Սրվաճյանն առաջիններից էր մեզանում, որ գիտակցելով երգիծանքի դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, դեռևս 1850—60-ական թթ. զարկ տվեց դրա զարգացմանը: Պատահական չէ, որ իր հիմնադրած հանդեսը նա անվանեց «Մեղու»՝ շեշտելով առավելապես վերջինիս խայթող բերությունը: Դա էլ ավելի ակնբախ կդառնա, եթե հիշենք, որ հանդեսի էջերում անվանի հրապարակախոսը տպագրում էր ոչ միայն երգիծական գրվածքներ, այլև սրամիտ ծաղրանկարներ, որոնցով համարձակորեն մերկացնում էր տիրող կյանքի արատները և հասարակության ուշադրությունը բեռնում շրջապատի բացասական երևույթների վրա: Դրան զգալի չափով նպաստեց Սրվաճյանի՝ շեշտված երգիծաբանի խառնվածքը: Ժամանակակիցներից մեկը՝ Մ. Մամուրյանը, իր «Հայկական նամականի» մեջ Սրվաճյանի դիմանկարը գծելիս առանձնապես շեշտել է նրա «սուր նայվածքը, որ ամեն բանի մեջ ծուռ ու թյուր կողմը նշմարելու հակամետ էր», «սայրասուր լեզուն», «հեզնալի ժրպիտը», որ «ամենն զգոն մարդն ինքզինքը կշռելու կհորդորեր», «Հրահանգիչ, մարդասեր անձ մ'որոհ հոգին հայելու վշտանց վրա լալու ատեն՝ շրթունքն անոնց թերությանց վրա կծիծաղին, գրիչը մոլություններ կհարվածե և մոլիները տարտաբոս կղրկե...»¹:

Երգիծաբան Սրվաճյանի տաղանդը փայլեց «Մեղուի» էջերում և լայնահուն ակոս բացեց ժանրի հետագա զարգացման համար: Բավական է ասել, որ նրա բաց արած ճանապարհով ընթացավ Պարոնյանը, որը բարձր է գնահատել Սրվաճյանի և նրա խմբագրած հանդեսի դերը. «Տեսած թերությունները ի սեր ազգին արձակ համարձակ ծաղրող թերթին ուրիշ ազգերը ինչ որ ուզեն թող ան ըսեն, մեր մեջ անոր Մեղու կ'ըսեն»²:

¹ Վրույր (Մ. Մամուրյան), Հայկական նամականի, Զմյուռնիա, 1872, էջ 259—260:

² Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 18:

Ոչ միայն իբրև խմբագիր, այլև որպես լրագրող-հեղինակ Սըվաճյանը լավ էր հասկանում երգիծանքի մաքրագործող նշանակությունը և այն գիտում էր որպես զորավոր զենք՝ ազգային կյանքի թերություններն ու արատները արմատախիլ անելու համար։ Բնորոշ է, որ դեռևս իր գրական գործունեության վաղ շրջանում ծառայելով այն կեղծ մտայնության դեմ, թե «ազգին մեջ եղած պակասությունները, նախապաշարումները ծաղրելը, հրատարակելը հանցանք է», Սըվաճյանը գրել է. «...Հապա ի՞նչ կուզեն, ազգը ռանակ կույր մնա, պակասություններու մեջ լողա ու չշտկվի, այո, այո, ա՛յ պիտի ըլլա անոնց ուղածը, անոնք կուզեն, որ ազգը կույր մնա, որ ի ծնե կույրերուն կուրությունը չհայտնվի—ո՛չ, ո՛չ, ասի չի՝ կրնար ըլլալ. ասանկ պետք է ընել և Սեղուն իր պարտքն է, որ կկատարե»³։

«Իր պարտքը» կատարելիս «Մեղուն» և նրա խմբագիրը դրսևորել են հետևողականություն և բարձր սկզբունքայնություն. «Մեղունի սկզբունքն է արդարությանմբ պատժել անիրավությունը, բառնալ անկարգությունները...»⁴, — գրել է Սըվաճյանը 1865 թ.։ Հավատարիմ իր այդ սկզբունքին՝ հրապարակախոս-երգիծաբանը տեղին ու ժամանակին բանեցրել է ծաղրի մտրակը «ազգային վերքերը բուժելու» նպատակադրմամբ։ Ոչ թե լալ, այլ խնդալ, — հա այն նշանաբանը, որով ընթացել է Սըվաճյանի և նրա խմբագրած հանդեսի գործունեությունը. «Մեղուն ծնած օրեն մինչև հիմա, — գրել է նա 1864 թ., — հարսնիքին տունը լայն ու մեռելին գլուխն վերև խնդալը սովորություն ըրած ըլլալով, այս սովորությունը իրեն բնություն մը եղեր է ու ալ չկրնար... ազգօգուտ ձեռնարկությանց արգելք եղողներուն վրա սրտացավ ազգասերներուն հետ ինք ալ լալ. հապա պիտի խնդա և պիտի խնդա»⁵։

Պարոնյանի նշանավոր աֆորիզմը («Ավելի կուզեմ խնդալով կրթվիլ, քան թե լալով») հիշեցնող այս խոստովանությամբ իսկ Սըվաճյանը ծառացել է լավկանության, ազգային ողբասացության դեմ և իր երգիծանքին տվել մարտական, լավատեսական շեշտ։ Խավարի ու հետամնացության, ֆեոդալական լծի ու կապիտալի ճիրաններում տառապող ժողովրդին ոգեշնչելու նպատակ ունեին նրա երգիծական մանրապատումներն ու հյուսիսի պամֆլետները, որոնք տոգորված էին մարտնչող դեմոկրատիզմով։ Ծիծաղի ու ծաղրի միջոցով Սըվաճյանը բացահայտում ու մերկացնում էր շրջապատող իրականության բացասական երևույթները և օգնում ժողովրդին՝ ճանաչելու կյանքը, հաղթահարելու իրեն վիճակված դառնությունները։ Այլ կերպ ասած, նրա երգիծանքը դառնում էր ոգեպնդիչ ու քաջալերող խոսք կղերաֆեոդալական ռեակցիայի և բուրժուական բարքերի դեմ մղվող պայքարում։

Հարկ է նշել, որ եթե սկզբնական շրջանում Սըվաճյանը շոշափում էր առավելապես կենցաղային հարցեր, ապա հետագայում օրավուր աճող ու մարտականորեն գործող հրապարակախոսի երգիծական գրիչը դառնում է ավելի ազդու և քաղաքականապես նպատակասլաց։

³ «Մեղուն», 1859, № 30, էջ 254։ Տե՛ս նաև Հ. Սըվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 60։

⁴ «Մեղուն», 1865, № 260, էջ 45։

⁵ «Մեղուն», 1864, № 239, էջ 250։

1

Սըվաճյանի վաղ շրջանի գործերից է «Օկյուսք Կինե» երգիծապատումը⁶, որտեղ ծաղրված է քաղքենիական վարքուբարքի սիրահար, «արդի նորասեր երիտասարդներեն» մեկը. «Մազերը այնքան եղոտ ու այնքան գալարված» են, որ «Ֆեսին եղերքը կլոր լար մը բաթըթված կը կարծվեր», «աչքերու բոլոր-տիքը փոխանակ արտեանունքի արյու-նի գույն կարմիր գիծ մը պարփակած էր», «կանաչ բաճկոն մը ու ճերմակ բանթալոն մը հագած էր», իսկ այս վերջինը այնքան նեղ էր, որ սեղմել էր մարմինը: Դրան հակառակ, կոշիկնե-րը շատ երկար էին ու սրածայր: Պարզ-վում է, որ նա իր զգեստները կարել է տվել ֆրանսիացի հայտնի դերձակ Օկյուստ Կինեի մոտ: Քաղքենի երի-տասարդը չի էլ հավատում, թե «հա-լերու մեջ ալ... վարպետ կը գտնվի», որ նման «կատարելությամբ սեթրի կարենա շինել»: Բոլոր նշաններից երևում է, որ դա իսկական մակա-բույծ կյանք վարող մի երիտասարդ է, որը «նեղ» ձեռնափայտ առած՝ թափա-ռում է աննպատակ, իսկ մայրը, շնայած առաջացած տարիքին, «առտըմնե մինչև իրիկուն»⁷ անդադար աշխատում է:



Նույնպիսի դատարկապորտ, բայց հարստությամբ իր ներքին սնանկու-թյունը սքողած երիտասարդի երգիծական դիմանկար է գծված «Հարուստ երի-տասարդի մը սենյակը» վերնագրով գրվածքում⁸: Հեղինակը տալովորիչ գույ-նեռով ներկայացրել է շքեղաշուք կյանք վարող, ծուլ ու անբան մի երիտա-սարդի սենյակը, որի «ամենաճոխ» զարդարանքը նրա «գրանոցն» է (գրադա-րանը): Բայց ի՞նչ է բովանդակում այն. դարակներում կարելի է տեսնել հու-նարեն երգելու տետրակներ, տաճկերեն-հայերեն բառգիրք, հայատառ թուր-քերեն լրագրի համարներ, զանազան «լրոց հայտարարություններ» և այլն: Իսկ «հայերեն կարգը դրված էին տետերն օրեն մնացած պղնձե քաղաք մը, Աղ-վեսագիլք մը, հինգ վեց հատ մը տղայությունը կաղանդին վարժապետեն ըն-ծա առած մանկանց մատենադարանին հատորներեն փառավոր կազմով...»: Այնտեղ կարելի է գտնել նաև «Մասյաց աղավնի», «Արփի Արարատյան» և «Ա-րևելք» պարբերականների առաջին համարները միայն: Պարզվում է, որ դրանք էլ նա վերցրել է տարբեր գրավաճառներից ու ցրողներից իբր թե ծանոթանա-լու, որ հետո՝ բաժնեգրվի: Այդպես է ձեռք բերել նա զանազան ուղղության պատկանող պարբերականների առաջին համարները, որոնց մեջ, ինչպես և

6 «Մեղու», 1856, № 1, էջ 19—21:

7 Նույն տեղում, էջ 24:

8 «Մեղու», 1856, № 4, էջ 89—96, № 5, էջ 111—113:

պետք էր սպասել, բացակայում է «Մեղուն», ժամանակի ամենադեմակրատական հանդեսը, Հեղինակը սպանիչ ծաղրի է ենթարկել մեծ մասամբ հետադիմական բովանդակություն ունեցող գրքերով ու պարբերականներով շրջապատված սնամիառ երիտասարդին, որը նույնքան անբովանդակ է, որքան նրա սենյակի պարունակությունը. թեև արտաքուստ ամեն ինչ տեղում է, բայց ինչպես սենյակը, այնպես էլ մանավանդ նրա տերը ճնշող տպավորություն են թողնում: Թե որքան տգետ է այդ քաղքենին, երևում է նաև այն բանից, որ նա ոչ մի պատմական անուն ճիշտ չի արտասանում, չգիտե նույնիսկ իր թանկարժեք իրերի անունները և շարունակ ծիծաղելի դրություն մեջ է ընկնում:

Հետաքրքրական է նշել, որ առաջին հայացքից անմեղ թվացող այս կարգի երգիծական պատումներն անգամ ժամանակին դժգոհություն են առաջացրել տոշ շրջաններում, սնունդ տալով քաղքենիական տրտունջների: Գտնվել են նույնիսկ մարդիկ, որոնք «Մեղունի» «զվարճախոսության պատճառով» սկսել են դանդաղել, թե ազգը «սլատվելու և փառավորելու» փոխարեն Սըվաճյանի հանդեսը վիրավորում է ու անպատվում նրա «վհանձնությունը», հրապարակ հանելով «անոր պակասությունները»: Պատասխանելով «Մեղունի» նման ընթերցողներից մեկին, որը նամակով դիտողություն էր արել խմբագրին «ծիծաղաշարժության համար», Սըվաճյանը մի հոգվածում բացատրում ու հիմնավորում է իր ընտրած երգիծական ոճի կենսական անհրաժեշտությունը. «Նա ալ միտքս դրած եմ,— գրել է նա,— բարեկրթության հորդորանքը բարոյականի վրա խոսող երևելի անձերն քաղած ատենս, մեր ազգին անհատական պակասություններ ալ ծաղրելով պարսավեմ, որպեսզի ընթերցողներուն մեջն ամեն մեկը իր պակասությունները ճանչելով ինքզինք ուղղելու ջանա...»⁹:

Ակներև է, որ Սըվաճյանը կրթական-դաստիարակչական կարևոր դեր էր տալիս երգիծանքին: Վերջինիս միջոցով նա ձգտում էր երևան հանել ազգային կյանքի պակասություններն ու վերքերը և դրանք քննադատելով ու ժխտելով՝ արթնացնել լավի ու գեղեցիկի իդեալները: Ոչ թե սքողել պակասություններն ու արատները, այլ բացահայտել ու մինչև վերջ մերկացնել, հնարներ գտնել դրանց բուժման ու վերացման համար. «Ո՞ր անխելքն է այն,— գրել է Սըվաճյանը,— որ կհամարձակի ըսել, թե վերք մը ծածկելով կը բուժվի, մի՞թե չգիտեր, թե մենք լուենք նե՛ մեր պակասությունները, օր օրի ավելի ամուր կհաստատվին մեր վրա և այն ատենը ամեն աշխատություն ոչինչ կըլլա»¹⁰:

Նրգիծանքի, որպես դադափարադաստիարակչական զենքի անհրաժեշտությունը հիմնավորելու համար Սըվաճյանը վկայակոչում է «լուսավորյալ և քաղաքակիրթ ազգերի» օրինակը, որոնց մոտ պակասությունները ծաղրող «լրագիրներուն մեկ թերթը բարոյականի դաստու փիլիսոփայի մը մեկ հատոր գրքեն ավելի ազդեցություն և արդյունք ունի»¹¹: Այդ համոզմամբ էլ նա իր հանդեսի էջերը հագեցրեց երգիծական նյութերով, որոնց առաջատար ոգին կենցաղում պահպանվող վնասակար նախապաշարմունքների ու «անվայել սովորությունների» անողոր քննադատությունն էր:

9 «Մեղուն», 1857, № 13, էջ 294:

10 Նույն տեղում, էջ 293:

11 Նույն տեղում, էջ 293:

Նման բնույթ ունի, օրինակ, «Կեշը կեշով տեֆ կ'ըլլա» պատմվածքը¹², որ արժանի է հատուկ ուշադրության: Այստեղ հեղինակը ճշմարիտ գույնեղությամբ պատկերել է հասարակ մարդկանց տգիտությունն ու սնահավատությունը, որոնց վերջիվերջո զոհ է դառնում մի ազնիվ հոգի:

Իրականության հանդեպ Սըվաճյանի երգիծական-քննադատական վերաբերմունքն արտահայտվել է բազմաթիվ ձևերով: Լինելով կյանքի մարդ՝ նա իր շրջապատում տեսել ու զգացել է այն երևույթները, որոնք սնունդ են տալիս միայն ծաղրի ու ծիծաղի: Այդ տեսակետից ուշագրավ է «Հայերեն խոսելու զանազան կերպեր» ֆելիետոնը¹³, որտեղ հեղինակը, դիմելով չափազանցությունների, ծաղրում է լեզվական գոհակությունները: Սըվաճյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Պոլսում կարելի է հանդիպել հայերեն խոսելու զանազան կերպերի, որոնք ոչ մի կապ չունեն ժողովրդական կենդանի խոսվածքի ու լեզվամտածողության հետ: Եթե կան մարդիկ, որոնք «մաքուր հայերեն խոսելու փափաք ունին», բայց չեն տիրապետում մայրենի լեզվին ու դառնում են ծիծաղելի, դա ոչ մի վտանգ չի ներկայացնում. հետզհետե կսովորեն: Հապա ի՞նչ ասել նրանց մասին, ովքեր «իրենց գիտցած հայերեն բառերուն տեղ ալ օտարազգի բառեր կը գործածեն կարծես թե գիտցած քիչ մը հայերենին ալ մոռնալու դիտմամբ»: Դա բնորոշ է մանավանդ «եվրոպական լեզուներ գիտցող» շատ երիտասարդների համար, որոնց առօրյա խոսքն ու զրույցը հաճախ անհասկանալի են հասարակ մարդկանց: Նույնքան անհասկանալի են նաև այն անձինք, ովքեր «մաքուր հայերեն խոսելը բավական չհամարելով, ամեն օր բառգիրքները կը թղթատեն, խրթին և խորդ բառեր գտնելու ու անոնք իրենց խոսակցության մեջ գործածելու համար, որպեսզի... իրենք քաջ հայերենագետ ճանճցվին»: Պարզ է, որ Սըվաճյանը հավասարապես ծաղրում է թե՛ «հայերենագետ» մաքրամոլներին և թե՛ մայրենի լեզուն արհամարհող օտարամոլներին:

Սըվաճյան-երգիծաբանի դիտողունակությունը, կենսական երևույթների մեջ թափանցելու և ծիծաղելին որսալու կարողությունը ցայտուն կերպով դրսևորվել են նաև «Այս ամսուն մոտաները» ընդհանուր խորագիրը կրող գրքվածքների մեջ¹⁴: Առօրյա կենցաղային փաստերը նրա գրչի տակ այնպես են իմաստավորվել, որ ձեռք են բերել գեղարվեստական հնչեղություն: Զվարճալի ոճով նա պատմում է մոդայամուլների, նորաձևության սիրահարների, բուրժուական կենցաղի ալլևալլ ալլանդակությունների մասին, որոնք հետագայում առավել սուր և սպանիչ քննադատության ենթարկվեցին Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» նովելաշարքում:

Նույն այդ թեմային է առնչվում նաև «Մոպալուր մոտա կամ փյուսկյուլու պելա» վերնագրով երգիծական պատմվածքը¹⁵, որտեղ ծաղրվում են կանացի գլխարկների նորաձևության տգետ սիրահարները: Հեղինակը պատմում է, թե ինչպես Փարիզում, հարուստ մի աղջիկ հիվանդության պատճառով չի կարողանում գլուխը ուղիղ պահել: Փորձառու մի ծերունի այն միտքն է հայտնում, թե քանի որ «աղջկանը գլուխը դեպի աջ կողմը ծովեր է, ձախ կողմն էլ վար

¹² Նույն տեղում, № 16, էջ 279—284, № 20, էջ 474—479:

¹³ Նույն տեղում, № 22, էջ 524—527:

¹⁴ «Մեղրու», 1859, №№ 3, 6, 9, 12 և այլն:

¹⁵ «Մեղրու», 1862, № 151, էջ 20—21:

ծանրություն մը կախելու է, որպեսզի կամաց-կամաց գլուխը դեպի ձախ կողմը քաշվելով շտկվի...»։ Որոշվում է աղջկա գլխին դնել գլխարկ, սրա ձախ կողմից կախելով կապարի կտորներով լցված սև մետաքսյա ծոպեր (փյունկյուլ)։ Ծոպերի ծանրությունը «կամաց-կամաց աղջկանը գլուխը դեպի իրեն քաշելով երևի չորս ամիսեն շտկեր է»։ Բայց առավել զավեշտականն այն է, որ դերձակուհիներից մեկը, տեսնելով այդ գլխարկը, կարծում է, թե հենց այդ է վերջին նորաձևությունը և որոշում է նման գլխարկներ կարել։ Բոլորն էլ անխտիր ցանկանում են ժամ առաջ պնձնվել նրանով։ Հեղինակը վերջում սրամտորեն նկատում է, որ եթե այդ ծոպավոր գլխարկը «ծուռ ճիտերը կշտկե նե՛ղիտակ ճիտերն ալ պիտի ծռե... ուրեմն ասկե երևի չորս ամիս ետքը շատ մը ծուռ ճիտ կնիկներ պիտի տեսնենք»։

Ինչպես տեսնում ենք, Սըվաճյանը կարողացել է մասնավոր փաստը դարձնել քաղքենիական իրականությունը մերկացնելու գեղարվեստական միջոց։ Նույնը կարելի է ասել «Մանկաստի՛ն հարսնի՛ք» երգիծական պատմվածքի¹⁶ մասին։ Պոլսահայ կյանքից առնված կենցաղային մի դրվագ է սա, որտեղ հեղինակը Մանկաստի հարսանիքի ֆոնի վրա բացահայտել է տիրող իրականությունը բնորոշ մի շարք արատներ, ինչպիսիք են՝ բամբասկոտությունը, կովարարությունը, որկրամոլությունը և այլն։

Սըվաճյանը սուր դիտող էր. նրա աչքից չէր վրիպում շրջապատում կատարվող որևէ երևույթ, որ կարող էր վնասել կամ խոչընդոտել հասարակական առաջադիմությունը։ Նա հասկանում էր, որ հանգամանքների բերումով հաճախ ոչնչությունը հասնում է բարձր դիրքի, հանձն առնում նույնիսկ մատաղ սերնդի դաստիարակությունը՝ չունենալով համապատասխան տվյալներ։

Այդ առումով հետաքրքրական է «Հոգաբարձու մը ԸԼԼԱՅԻՐ» գրույցը¹⁷։ Այստեղ հեղինակը սուր ծաղրի է ենթարկել պատահականորեն «վարժապետ» դարձած մարդկանց մտավոր թշվառությունը, բարոյազրկությունն ու դաժանությունը։ Նա իրավացիորեն «աղեկ բան» չի համարում «ազգին տղաքը ասանկ բան չի հասկացող մարդոց ձեռքը տալը», որովհետև մատաղ սերունդը դառնում է մտավոր հաշմանդամ։ Դրանում պակաս մեղավոր չեն հոգաբարձուները, որոնք ոչ միայն չեն արդարացնում իրենց կոչումը, այլև դարձել են հոգեհառներ։ Դիմելով բառախաղի, հեղինակը իր գրույցակցին ասում է. «Հոգեբարձու չըսի, բայց դուն ավելի ճիշտ անուն մը տվիր ատ մարդոց։ Ես հոգաբարձու ըսի, որ հոգը վրան առնող ըսել է. քու ըսածդ, հոգեբարձու, հոգին վերցնող, հոգին առնող ըսել է. իրավցընե ալ աս մարդիկը դպրատունին հոգը վրանին առնող ԸԼԼԱԵՆ էվել անոր հոգին վերցնող են, ես ալ ասկե ետքը քեզի հետ հոգեբարձու պիտի ըսեմ աս մարդոցը»։ Ակնհայտ է հեղինակի ծաղրը, որի սլաքներն ուղղված են ոչ միայն հոգաբարձուների, այլև նրանց հանդուրժող մարմինների դեմ։ Վերջիններիս թողտվությամբ է, որ նույն հոգաբարձուները դարձել են վաճառականական հոգու տեր և ամեն բանի մեջ հետապնդում են մերկ շահ։

Ինչպես կարելի է նկատել, իր վաղ շրջանի երկերում արդեն Սըվաճյանը սուր ծաղրի է ենթարկել բացասական երևույթներն ու բարոյական փտերը, որոնց երգիծական բնութագրմամբ հեղինակը բացահայտել է քաղքենիական

¹⁶ «Մեղու», 1859, №№ 3, 6, 9, 15, 21, 36։

¹⁷ Նույն տեղում, № 9, էջ 68—69։

միջավայրի գորշութիւնը, ճահճացած մթնոլորտը և դրանով իսկ արթնացրել մտքեր, լավի ու գեղեցիկի իդեալներ:

2

Սխալ կլիներ կարծել, թե Սըվաճյանի երգիծանքը սահմանափակվում է միայն կենցաղային խնդիրներով: Բանն այն է, որ երգիծանքը նրա մոտ սերտորեն կապված էր հրապարակախոսական գործունեության հետ և սնվում էր վերջինիս գաղափարական մղումներով: Քանի առաջ էր գնում ու մարտակառն թափ ստանում Սըվաճյանի հրապարակախոսութիւնը, այնքան ավելի կծու էր դառնում նրա երգիծանքը, որը հետզհետեւ ընդլայնելով իր ոլորտը՝ շոշափեց նաև սոցիալ-քաղաքական կյանքի հետ կապված հրատապ հարցեր: Դա նկատելի դարձավ հատկապես 1860-ական թթ. սկզբից, երբ անվանի հրապարակախոսն անվրեպ կրակ բացեց տիրող վերնախավի և նրա շահերն արտահայտող կղերականացանողական ու լիբերալ-բուրժուական գաղափարախոսութիւնն: Այդ սլաքարի ընթացքում Սըվաճյանի մոտ հրապարակախոսութիւնն ու երգիծանքը միահյուսվեցին՝ կազմելով օրգանական սամբոլիզմ: Դրան զգալիորեն նպաստեց հեղինակի երևակայությամբ ստեղծված Մեչուխեչայի կերպարը, որը փաստորեն նրա երկվորյակն էր, նրա խոհերի ու տրամադրութիւնների արտահայտիչը: Մեչուխեչայի միջոցով էր Սըվաճյանը մըշտական կապ ստեղծում տարբեր խավի ու միջավայրի պատկանող մարդկանց հետ և նրանցից ստացած տպավորութիւնները երբեմն հումորով, բայց հաճախ սատիրայով ներկայացնում ընթերցողին: Այլ կերպ ասած՝ հեղինակի մտահղացմամբ Մեչուխեչան անձնավորում է երևութների նկատմամբ ունեցած իր պատկերացումներն ու քննադատական հայացքները:

Այս հանգամանքը ժամանակին նկատել է Հր. Ասատուրը, որի կարծիքով Մեչուխեչայի կերպարը «Մեղուի» խմբագրի համար միջոց էր «իր դիտողութիւնները շահագրգիռ ձևով ներկայացնելու... Այս էակը, — գրել է նա, — տեսակ մը խալիկ էր, որ շատ մը լուրեր ու տեղեկութիւններ կբերեր իրեն, խորունկ հետաքրքրութիւն մը ուներ ամեն բան իմանալու և կուգեր որ իր հեգնական դատումները հրապարակվին ու հանցավորները խաբաղանվին հրապարակով: Եթե պիտի տեսներ՝ օդին մեջ կբարձրանար, նույնիսկ գետին տակ կիջներ, խլուրդներու մեջ կխառնվեր, որդերն ու մրջյուններն իսկ չէր արհամարհեր կյանքը ուսումնասիրելու համար: Մեչուխեչա ընտանիքներու մեջ կմտներ, ներկա կգտնվեր էրիկ — կնկան վեճերու կամ ուրիշ ընտանեկան տեսարաններու, որոնք ապա կպատմվէին «Մեղուի» մեջ: Ան էր, որ եկեղեցականներու խիղճը կպրպտեր, անոնց թաքուն մտածումները քողազեծ կըներ, անոնց փառասիրական ձգտումները պարսավելով: Վերջապես, ուր որ զանցառութիւն կամ զեղծում կա մատնանիշ ընելիք՝ Մեչուխեչան հոն էր, հեգնող ժպիտը շրթունքին վրա, ծաղրանքի սլաքներ արձակելու պատրաստ»¹⁸:

Որ այդպիսի դեր էր կատարում Մեչուխեչան Սըվաճյանի հրապարակախոսութիւնն ու երգիծանքի մեջ, գիտեին նաև նրա հակառակորդները: Դրանցից մեկը՝ Զամուռլյանը, Մեչուխեչային բնորոշել է որպէս «Սըվաճյանի ընտանի

18 Հր. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 130—131:

ոգին, որ ամեն բան որքան գաղտնի գործված ըլլա նե՝ անոր կիմացընի...»¹⁹ Դա նշանակում է, որ հեղինակն ու նրա հերոսը տվյալ դեպքում կաղմում են անքակտելի ամբողջություն և մեկը լրացնում է մյուսին: Ուստի զարմանալի չէ, որ Սըվաճյանի հակառակորդները թշնամանքով էին լցված նաև դեպի Մեշուխեշան, որին նույն Չամուռճյանը անվանում էր «սատանա», «դև»: Եվ դա հասկանալի է. Մեշուխեշայի բերանով է, որ Սըվաճյանը ջախջախիչ քննադատության էր ենթարկում իր գաղափարական հակառակորդներին և դրանց շարքում առաջին հերթին հոգևորականներին: Սրանք, ինչպես նշել է ազատախոս հրապարակագիրը, կրոնը ծառայեցնում էին «ժողովրդի հոգուն վրա բռնանալու» և նրան հարստահարելու համար: Այդ կապակցությամբ ուշագրավ է «Այս օրերուն բարբառը», որտեղ միաժամանակ դրսևորված է հեղինակի ու Մեշուխեշայի միջև եղած հարազատությունը:

Սըվաճյանի երգիծանքը սարկաստիկ շեշտ էր ստանում բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում էր ռեակցիայի ու խավարամտության հանրաճանաչ ներկայացուցիչներին, որոնց իրավամբ բնութագրել է որպես «հայ ազգին տունը հիմեն քակող քաղցկեղ»²⁰: Համանուն հոդվածում, օրինակ, խոսելով «մարդկային սևուր փշացնող» բարոյական քաղցկեղի մասին, որ ավերում ու կործանում է «հոգվույն տունները», Սըվաճյանը նշում է, որ այդ «մահաբույր» հիվանդությունն իր «տարափոխիկ զորությամբ» մտել է նաև հայոց տուն, ուր «շատ երեկելի կարծված ու մարդու կերպարանք ունեցող անձիքն գիրացած և այսօր մեյմեկ պատվարներ եղած են ազգային հառաջադիմության առջև»: Դրանցից են «Չամուռճի Տերոյենց պատվելին ի Տաճկաստան և Այվազովսքի վարդապետն ի Ռուսաստան...»:

Առաջինը՝ Հովհաննես Տեր-Կարապետյան Տերոյենց Չամուռճյան պրուսացի բազմանուն պատվելին իր հակաժողովրդական գործունեությամբ քրննադատվել ու ծաղրի էր ենթարկվել դեռևս Նալբանդյանի կողմից: Հետևելով իր գաղափարակցին՝ «Մեղուի» խմբագիրը նույնպես տարբեր առիթներով անդրադարձել է Չամուռճյանի վարքին ու հայացքներին: Հիշենք թեկուզ «Պ. Չամուռճյանի գործունեությունը», «Մեծ քիթ մը», «Պ. Չամուռճին աշխարհեն վերանա նե տեղը ո՞վ դնենք» և ուրիշ հոդվածներ ու պամֆլետներ, որոնք լի են քաղաքական երգիծանքի փայլատակումներով:

Ուշագրավ է, որ տակավին 1861 թ. գրած իր հոդվածներից մեկում Սըվաճյանը երգիծական ոճով բացահայտել է Չամուռճյանի և նրա խմբագրած «Երևակի» ունայնամտությունը: Երեկոյան նայելով երկինքն ի վեր, Չամուռճյանը տեսնում է գիսաստղ՝ վարսամ, որի մասին առավոտյան խոսում են մարդիկ և նրանից լուր սպասում: Նախանձելով վարսամի փառքին՝ Չամուռճյանն շտապ վազում է տուն, ելնում գիտանոցը և տեսնում, որ երևակը չի երևում հորիզոնի վրա: Նա շատ է ուզում երևակը մոտեցնել վարսամին և առաջինի լույսով աղոտացնել երկրորդի փառքը: Այդ նպատակով էլ, աստղաբաշխական հաշիվներ կատարելուց հետո, վերջապես հուլիս ամսին հրապարակ է հանում իր «Երևակ» լրագիրը: Վերջինիս ծնունդը առավել զվարճալի է դառնում նրանով, որ Չամուռճյանը ևս հասկանում էր երևակի և վարսամի տարբերությունը, համոզված էր, որ եթե նրանք միմյանց կողքի էլ դրվեն,

¹⁹ «Երևակ», 1861, № 113:

²⁰ «Մեղու», 1863, № 220, էջ 297—298:

միևնույն է, դարձյալ ամեն մարդ պիտի թողնի իր երևակը և մյուսին նայի, ուստի «այս անգամ երևակին ուրիշ գույն մը տալով կը ներկայացնեն քննող ու դիտող աչքերուն»²¹:

«Երևակի» հանդես գալը Սըվաճյանը բնութագրում է որպես մատնիչի ծնունդ: «Շատուց է հայերը մատնիչ տեսած շունեին և շիտակը հետաքրքրական բան մըն է այդ հրեշը տեսնել»²²: Եվ ահա հրապարակ է գալիս «Երևակ» լրագիրը, որը բաժանորդներին ուղարկելիս խմբագիրը խստորեն պատվիրում է, որ «չկարդալիք չընեն...»: Բայց ինչո՞ւ են լցված այդ լրագրի սյունակները: Եթե հարկ լինի խոսել այդ մասին, ասում է Սըվաճյանը, ապա «պետք պիտի ըլլար թիվ երևակին դեմ անոր տասնապատիկ մեծությամբը թերթեր հանել»:

Չամուռճյանն այնքան առաջ գնաց, որ փորձեց սահմանադրական շարժման ներկայացուցիչներին, այդ թվում և մեղավականներին «...ամենուն աչքին շարագուշակ և վտանգավոր երևցնել», դրանով իսկ նրանց վրա հրավիրել սուլթանական կառավարության ուշադրությունը: Հենց այդ դիտավորությամբ է, որ նա հայտարարեց. «Սահմանադրությամբ միևնույն պետության մեջ երկու կերպ կառավարություն ունենել կըլլա...»: Սըվաճյանը երգիծանքի ուժով ցույց է տալիս, որ իր այդ հայտարարությամբ «ազգասեր պատվելին... սահմանադրության և ազգին մատնիչն ըլլալ կուզե», որ նա ունի «իրեն օգնական ուրիշ մատնիչներ ալ», որոնց միջոցով տաճկերեն թարգմանել տալով իր գրածները՝ «կայսերական կառավարության բարձրաստիճան պաշտոնեից միտքը արթնցնել կուզե»²³: Վերջին տողերով Սըվաճյանը ակնարկում էր Չամուռճյանի ազգադավությունը. «Երեսդ ճերմակ, պատվելի, Հուդայի մոմին պես», — կարդում ենք նույն տեղում: Դրա հետ միասին Սըվաճյանը մերկացրել է այն ստոր դաշինքը, որ հյուսվում էր երբեմնի «ոխերիմ թշնամիներ» Չամուռճյանի և Գ. Տեյիրմենճյանի միջև: Սրանք «սկզբունքն զուրկ կամ եղենդագործ անձեր են»²⁴, — ասում է Սըվաճյանը, — որոնք բարեկամացան սոսկ «ազգային սահմանադրությունը սպաննելու» դիտավորությամբ: Դրա համար էլ Չամուռճյանը ձեռք մեկնեց «Արևելյան դար» կիսամսյա հանդեսի խմբագիր Տեյիրմենճյանին և միասնական ճակատ կազմած՝ պայքարի ելան սահմանադրականների դեմ: «Այս օրերս, — գրել է Սըվաճյանը Չամուռճյանի մասին, — բու գլխուդ փոխվեր՝ Արևելյան դարին գլուխը դարձեր է. ասոր ալ ապացույցը սա է, որ այս միջոցին իրարու հետ շատ սիրաբլորեր եք և իրարմե չեք կրնար կոր զատվիլ»: Ծաղրելով ռեակցիայի սպասավորների համագործակցությունը՝ Սըվաճյանը «Երևակը» բնութագրում է որպես դիմակ, որով բողարկվում է նրա խմբագիրն իր խարդախ ու նենգադավ գործունեությունը առաջ տանելու համար: Կեղծելը, ուրիշների ասածը նենգափոխելը, մատնելը Չամուռճյանի համար դարձել է արհեստ. «...սա արհեստով միայն կապրիս և քո տոլապղ անհավատություններու, հերետիկոսություններու ու մոլություններու իլամներդ լցված է...», — գրել է Սըվաճյանը:

Ըստ ամենայնի մերկացնելով Չամուռճյանի կղերամտությունն ու շարամտությունը՝ Սըվաճյանը նրան բնութագրել է որպես «իժ մը», որ միշտ իր

²¹ «Մեղու», 1861, № 141, էջ 182:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 183:

²⁴ Նույն տեղում, № 136, էջ 144:

թույնը թափել կ'ուզե անմեղներուն վրա և իր ականջները խցելով իրեն դեմ ըսվածները չի լսեր և գլուխը կախած իր փորձեն հտ չկենար: Իր փորձն է ամեն անգամ դաժան բանը անելուն կամ ժանտ գրիչը ձեռք առնելուն կրոնքի պատրվակով հերմար անհարմար քաշկուտելով ասոր անոր, ուզածին անհավատ ընել: «Կրոնքի պատրվակով» սրան-նրան «անհավատ ընող» Չամուռճյանը «ճճիի պես կը սողա» լուսավորչալիների հոսից և «օձի պես խայթել կուղե դանոնք»: Նրա խավարամոլությունն է ակնարկում Սըվաճյանը, ասելով. «Խավարը լույսեն ավելի սիրելով՝ անոր մեջ թաղվեր մնացեր է...». «ապերախտ», «զրաբան», «անհեթեթ գլուխ», «ժանտ գրիչ», «հրեշ», «օձ», — ահա այն բնորոշումները, որոնցով Սըվաճյանը բացահայտել է Չամուռճյանի բարոյաքաղաքական սնանկությունը:

Սույն պամֆլետից մի շաբաթ անց Սըվաճյանը հրապարակեց մի նոր դրվածք («Չամուռճյանի զեկուցումը»), որտեղ, դարձյալ ծաղրելով արևմտահայ ռեակցիայի պարագլխի միջնադարյան խավարամոլությունն ու սնափառությունը, գրել է. «...կեցցե՛ս, պ. Չամուռճյան, բոլոր սատկած կատուները հոգուդ մատաղ... ալսուհետև հոգ մի՛ ըներ. կրոնքը վերցընենք նե՛ տեղը քեզ կըղենենք»²⁵:

Գատապարտելով Չամուռճյանի հակահայրենասիրական վարքագիծը՝ Սըվաճյանը նշում է, որ հենց դրանով «Երևակի» խմբագիրն իրեն հակադրեց ժողովրդին և վաստակեց նրա ատելությունը. «...դուն քու մեկ քանի ներշնչողներուդ ու ներշնչալիներուդ հետ մինակ պիտի մնաս, միշտ հեռու քու հայրենակիցներեդ և ատելի միշտ անոնց»²⁶: Այլ վերաբերմունք լինել չէր կարող դեպի մեկը, որը բամբասանքով, զրպարտություններով, մատնությամբ աշխատում էր «հայը տերությունը կասկածելի ցուցանել», զոհաբերել ժողովրդի ազգային շահերը իր նեղ, փառասիրական ու կարիերիստական ձգտումներին: Հենց այդպիսին էր Չամուռճյանը, որն իր ստոր ծառայությունների համար թուրքական կառավարության կողմից արժանացավ պատվանշանի:

Չամուռճյանի համախոհն ու մտերիմ բարեկամն էր Գաբրիել վարդապետ Այվազովսկին: Վերջինս, ինչպես հայտնի է, ցարիզմի վարձու գործակալն էր և Նալբանդյանի ռեսերիմ հակառակորդներից մեկը, որի մատնությունը սարկազմով մերկացրել էր «Երկու տողի» հեղինակը:

Հետևելով Նալբանդյանին՝ Սըվաճյանը ևս սարկաստիկ գրչով ծաղրել է Գաբրիել վարդապետին և բացահայտել նրա գործունեության վնասակարությունը: Այդ իմաստով ուշագրավ է նախ և առաջ «Հայոց և հունաց եկեղեցիները միացնելու խորհուրդը և Այվազովսկի վարդապետին անիրավ զրուցները» վերնագրով հոգվածը²⁷, որտեղ ուխտազանց վարդապետը բնութագրված է որպես մեկն այն անձերից, որոնք «գաղտնի և հայտնի և կամ այլևայլ միջոցներով ազդն սպանել կուզեն»: Նկատի ունենալով Այվազովսկու՝ սուտ խոսելու և զրպարտելու սովորությունը, Սըվաճյանը սրամտորեն գրել է. «Իր բառերին մեջ ազատություն բառը լրբություն կը նշանակի»: Եվ մարտնչող հրապարակախոսը դա հաստատում է նաև նրանով, որ հենց «...ինքը Գաբրիել

²⁵ «Մեղու», 1862, № 158, էջ 84:

²⁶ Նույն տեղում, էջ 85:

²⁷ «Մեղու», 1861, № 137, էջ 148—150:

վարդապետն է, որ ամենուն վրա շարախոսություն կընե, զրպարտություն կընե...»։ Իսկ եթե մեկը «այդ երկու մեծ վատություններն ըրած է, ուրիշ շատ վատություններ ալ ընելու կարող և պատրաստ է»։ Իր հոգևածի վերջում Սըվաճյանն ավելացնում է, որ Գաբրիել վարդապետը վրեժխնդրությունից մըղված արգելել է Ղրիմ մտցնել «Մեղուի» այն համարը, որը «իր վրայոք գըրված» հոգևած է պարունակում։ Բայց դա ոչ միայն չի մտահոգում, այլ ուրախացնում է «Մեղուի» խմբագրին թեկուզ այն պատճառով, որ վարդապետը դրա մեջ «մեծ միտթարություն մը գտած պիտի ըլլա...»։

Հետագայում, Ներ Նախիջևանի դպրոցի փակվելու առթիվ գրած իր հոգևածում²⁸ Սըվաճյանը նորից է անդրադառնում Այվազովսկու վարքագծին և մերկացնում նրա հերթական «ուրացությունը»։ Հետևողականորեն նշավակելով Այվազովսկու երկերեսանիությունը, Սըվաճյանը «եզվիտ» վարդապետին բնութագրում է որպես «շարական առաջնորդ»։

Անդրադառնալով այն բացասական դերին, որ կատարեց Այվազովսկին հնդկահայ կտակագումարները յուրացնելու նպատակով՝ Սըվաճյանն իր մի հոգևածում նշում է, որ Նալբանդյանի հնդկական առաքելությունը կատարվեց «հակառակ մի քանի անձանց ընդդեմ ջանացողությանը»²⁹։ Այդ անձերից էր նաև Այվազովսկին, որը, ինչպես հայտնի է, փորձում էր ժողովրդից գաղտնի տիրանալ կտակագումարներին։ Հենց այդ նկատի ունենալով Սըվաճյանը, երբ գրում էր. «Քիչ դժվարություն չըկրեց պ. Նալբանդյանց այդ կտակը ատոր (իմա՝ Այվազովսկու—Գ. Ս.) ճանկերեն աղատելով բուն անոր տերերին դարձնելու համար»։

Տարբեր առիթներով քննադատելով ու մերկացնելով Այվազովսկուն, սպանիչ ծաղրի ենթարկելով նրա ռեակցիոն գաղափարաբանությունը, Սըվաճյանը ձգտում էր մի կողմից ցույց տալ, թե ինչ վտանգ էր սպառնում նա դեմոկրատական շարժման համար, մյուս կողմից՝ կազմակերպել հասարակական կարծիքը։ Բանն այն է, որ Այվազովսկին միայնակ չէր. նա բարեկամներ ուներ թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում։ Նրան պաշտպանում էին հայ վերնախավը և նրա գաղափարախոսները Մոսկվայում ու Փարիզում, Թիֆլիսում ու Պոլսում... Վերջապես, նա վայելում էր ցարի ու սուլթանի հավատարիմ մարդկանց անվերապա՝ վստահությունը, որը նվաճել էր, ինչպես վկայում է «Մեղուն», «Ժանր, հանդարտ, բարեպաշտորեն և անդադար ծնրադրություն ընելով»։ Ուրեմն, բանը սոսկ Այվազովսկու անձը չէր, այլ այն շարիքն ու մտայնությունը, որոնց կոնկրետ մարմնացումն էր նա և որի անունով էլ Սըվաճյանը կոչեց երևույթը, հրապարակ նետելով «այվազովսկիաբանություն» արտահայտությունը։ Հետևաբար, պայքար Այվազովսկու դեմ՝ նշանակում էր պայքար կղերաաղայական ռեակցիայի դեմ, որն առանձնապես ուժեղացավ համառուսական հեղափոխական ճգնաժամի տարիներին։ Այդ այն ժամանակն էր, երբ «մեկ քանի վատ հոգիներ անհամբեր սրտով» սպասում էին ձերբակալված Նալբանդյանի մահապատժին, իսկ հայ դեմոկրատիան իր հավատարմությունն էր արտահայտում նրա անձի ու գործի նկատմամբ։

Այս ամենի լույսի տակ առավել քան պարզ է դառնում, թե ինչու Սըվաճյանը պահանջ էր զգում հրապարակորեն վերստին մերկացնելու Այվազովս-

²⁸ «Մեղու», 1862, № 166, էջ 146—149։

²⁹ Նույն տեղում, № 172, էջ 1։

սկուս ու նրա արբանյակներին, պաշտպանելու հայ հեղափոխական դեմոկրատիայի առաջնորդին: Դրա նոր և ցայտուն արտահայտությունը եղավ «Կտուր մը այվազով սկիռություն» խորագրով հայտնի պամֆլետը, որ լույս տեսավ 1864 թ. դեկտեմբերի 5-ին, որպես «Մեղուի» հավելված: Այստեղ Սըվաճյանը փաստերի լեզվով, երգիծանքի այրող զենքով վերջնականապես դիմակազերծ է անում փառամոլ վարդապետին և բացահայտում նրա անունով կոչվող երևույթի՝ այվազով սկիռաբանության իմաստը:

Ուշագրավ է, որ պամֆլետի հենց սկզբից Սըվաճյանը ծաղրի է ենթարկում Գաբրիել վարդապետի փառասիրական մոլուցքը: Վերջինս այնքան էր երազում հպիսկոսություն և այնպես էր համոզված դրան հասնելու մեջ, որ դեռ չձեռնադրված, «մինչև անգամ (ասի աչքով տեսնողի մը վկայությունն է), «արքեպիսկոպոս Գաբրիել Այվազյան» ըսելով կնիք մ'ալ փորել տվեր էր...»³⁰: Բայց, ինչպես հայտնի է, ոչ միայն ի դեռևս ելան վարդապետի այդ հույսերը, այլև նրա դեմ եղած գանգատների պատճառով կաթողիկոսն ստիպված եղավ ստեղծել հատուկ հանձնաժողով նրա «առաջնորդական տնտեսությունը» տեղում քննելու համար: Պարզվեց, որ նա կատարել է զանազան զեղծումներ ու չարաշահումներ: Շահամոլությունից մղված վարդապետը կամայականորեն ավելացրել էր հարկերը. «Եթե բան մը հարկե ազատ մնացեր էր նե՛ անի եկեղեցի երթալն էր», — սրամտորեն ասում է Սըվաճյանը: Հրապարակախոսը խորհուրդ է տալիս Այվազովսկուն՝ չփորձել «իր աշխարհածանոթ ստախոսությունը» հերքել այդ մեղադրանքը. հակառակ դեպքում ինքը ստիպված կլինի նրա «բարոյականին վերջին և մահացու հարված ալ հասցնել»: Փաստերով զինված Սըվաճյանը արքային մեջ է առնում իր հակառակորդին. «Մեր վարդապետը խելք ունի նե՛ բերանը չբանար, — ասում է նա, — վասն զի բանա նե՛ հոտը աշխարհ կը բռնե...»³¹:

Մաքուր չէ նաև Այվազովսկու ձեռքը, որով հափշտակել է ահագին գումարներ: Սըվաճյանը հաշիվ է պահանջում նրանից, ինչպես և մեղադրանք առաջադրում նրա կույր կուսակիցներին, որոնք «քանի մը տարի առաջ զԱյվազովսկին պաշտպանելու կը ճգնին...»: Նրանք «պետք է որ այսօր պատասխան տան, թե ինչ եղան ան քանի մը հարյուր հազար ֆարավանցիները իրենց շահերով ու տարեկան եկամուտներով, ինչպե՞ս կլվեցան և ինչպե՞ս եղավ, որ եկեղեցիները և անոնց վարձկան առաջնորդը այսօրվա օրս բացը ելան»:

Պամֆլետում մերկացված են նաև Այվազովսկու և խալիբյանի կապը, նրանց այն գործարքները, որոնք առաջացրին նորնախիջևանցիների բողոքը և դրա հիման վրա հարկ եղավ կաթողիկոսի միջամտությունը: Այս կապակցությամբ Սըվաճյանը նշում է այն զվարճալի փաստը, որ ինքնին բացահայտում է Այվազովսկու ճիզվիտական վարքը: Իմանալով, որ իր «առաջնորդական տնտեսությունը» ստուգելու համար Նոր Նախիջևան քննիչ է մեկնել, նա էջմիածնից շտապ վերադառնում է այնտեղ և իր «արբանյակներուն ու հոգևոր կառավարությանը» պատվիրում ոչ մի տեղեկություն չտալ նրան:

Այվազովսկին հրաման էր արձակել «առանց իր առաջարկության՝ ուղղափի կաթողիկոսեն խաչ ստացող քահանայքը չհամարձակվին խաչերնին կրել»:

³⁰ «Հավելված ի Մեղու», 1864, դեկտեմբերի 5, էջ 1:

³¹ Նույն տեղում:

Եվ այդպես վարվում է Այվազովսկին, նա՛, ով առանց ուրե՛ հրամանի «անամոթությամբ վաճառանոցեն խաչ մը առեր ու վիզը անցուցեր էր (ասոր ականատեսները հազարավորներ են) և 1859-ին նույն խաչով կաթողիկոսը Փոթիի նավահանգիստը դիմավորելու հանդգներ էր: Ետքը աս, ան միջնորդ ձգելով... կաթողիկոսն ալ անոր տղայական փառասիրության վրա խղճալով ան խաչը կրելու համար կոնդակ մը տված ըլլալով Այվազովսքիի աններելի սխալը շտկած էր...»: Իսկ հիմա, — ասում է Սըվաճյանը, — նույն Այվազովսկին իրեն խաչ տվողին «ուրիշներուն տված խաչը շնորհունելու փորձը ըրավ...»: Սա իսկապէս, աննախադեպ երևույթ էր, որ ցույց էր տալիս վարդապետի բարոյական նկարագիրը: Սըվաճյանը Այվազովսկուն բնութագրում է որպէս իր դիրքը շարաշահող «բախտախնդիր մեկի», որը թեև զբաղվում է զրպարտությամբ ու քսությամբ, բայց երբեմն չի կարողանում ծայրը ծայրին հասցնել, ուստի և մերկացվում է: Դրա պերճախոս ապացույցը կոմս Սիվերսին հղած նրա նամակն է, որի համակողմանի վերլուծությամբ Սըվաճյանը վերջնականապէս մերկացնում է Այվազովսկուն որպէս մատնիչի:

Սըվաճյանի երգիծական նշտարը դիպել է նաև մեկ ուրիշ ռեակցիոն գործչի՝ կղերամիտ քարոզիչ, բանաստեղծ, դրամատուրգ Խորեն Գալֆայանին (Նար-պեյ): 1871 թ. գրած իր հոդվածներից մեկում («Քրիստոսի եկեղեցիին բաժանումը և պապականությունը. դոկտոր Շիշմանյան և տեր Խորեն եպիսկոպոս»), պաշտպանելով Հովսեփ Շիշմանյանին (Մերենց) Խորեն եպիսկոպոսի այն զրպարտությունից, թե նա «լուսավորչական հայերը կաթողիկ ընել կուզեն», թե Շիշմանյանը «ազգին նենգամիտ թշնամին» է և այլն, Սըվաճյանը անհրաժեշտ է համարել մերկացնել զրպարտչին և ցույց տալ նրա ով լինելը՝ «Մեղուի» խմբագիրն ընդգծում է, որ Գալֆայանը «ազգին ծանոթացած օրեն մինչև ցարդ անդադար ամբաստանությանց ետքն ինկած է, որոնց և ոչ մեկը ցարդ ժխտված է համոզիչ փաստերով»³²: Եվ իր միտքը հաստատելու համար Սըվաճյանը Գալֆայանի կյանքից ու գործունեությունից բերում է մի շարք օրինակներ, որոնք ակնբախ են դարձնում նրա անվայել վարքը, շահամոլությունն ու փառասիրությունը: Ժամանակին, դեռևս Թեոդոսիայի Խալիբյան վարժարանում եղած կարճ միջոցին նա թույլ է տվել այնպիսի արարքներ, որ նույնիսկ Այվազովսկին նրան անվանել է «անխիղճ անզգամ», «ապերախտ», «զեմզեկ», «ամենուն ատելի», և ստիպված «տագնապով ճամփել»:

Վերադառնալով Պոլիս՝ Խորեն վարդապետը մի քանի մարդկանց աջակցությամբ Բերայի եկեղեցում քարոզիչ է դառնում: Բայց այստեղ էլ շուտով պարզվում է նրա ամոթալի վարքը, որը ծածկելու դիտավորությամբ կաթողիկոսը նրան տանում է էջմիածին: Շատ շանցած նա ձեռնադրվում է եպիսկոպոս և նույնիսկ ուղեկցում կաթողիկոսին Պետերբուրգ մեկնելիս: Հասնելով Մոսկվա՝ Խորեն եպիսկոպոսը «կեղծ ազգասիրությամբ և զսպալ զեմզեկությամբ» կարողանում է խաբել տեղի հայերին և «մեծ հարգ ստանալ»: Բայց մի ամիս շանցած, ինչպես և պետք էր սպասել, բացվում են նրա արատները՝

³² «Մեղու», 1871, № 64, էջ 1:

փառասիրությունը, կնամոլությունը և այլն: Տեսնելով այդ ամենը՝ կաթողիկոսը հանդիմանում է նրան, բայց զգաստանալու փոխարեն խորեն զնում է Լազարյանց իշխանի մոտ և լավով գանգատվում, թե կաթողիկոսը «զինքը կը հալածե և կխնդրե անկե, որ զինքը պաշտպանե կաթողիկոսին դեմ»: Պաշտպանության մասին խոսք լինել չէր կարող, քանի որ եպիսկոպոսին արդեն ճանաչում էին բոլորը: Հասկանալով, որ կաթողիկոսի մոտ իր մնալը անհնար է, նա Պոլիս վերադառնալու հրաման է պահանջում, որը և ղիջում է վեհափառը՝ «զլինեն տեֆ ընելու համար»:

Պետերբուրգից խորեն եպիսկոպոսն անցնում է Փարիզ, ուր եղբորն ու հարսին «կարոտակեզ այցելութենն ետքը» վերադառնում է Պոլիս: Սըվաճյանը ցույց է տալիս, որ Գալֆայանի նման պարոնները հոգևոր կոչումներ ստանում են սոսկ նրա համար, որ դրանով «դյուրավ հագուրդ տալ կրնան իրենց աշխարհական ցանկությունը», որ «առանց քրտինք թափելու... շատ երջանիկ և պորտապարար կյանք» վայելեն: Հեղինակն իրավամբ նրան համեմատում է քարավանի առջևից ընթացող ուղտի հետ և անվանում **Նառ-Բեյ**: Հոդվածում մինչև վերջ մերկացված են այս խարդախ եկեղեցականի ստոր գործելակերպն ու կարիերիստական մոլուցքը, որոնք արժանի են միայն ծաղրի:

Այդ առումով ուշագրավ է նաև Սըվաճյանի ֆելիետոններից մեկը՝ «Դարձյալ խորեն եպիսկոպոս» վերնագրով: Այստեղ նա պատմում է, որ հոգևոր առաջնորդ ընտրվելու համար խորեն եպիսկոպոսը թեև ծանր պայմաններ է առաջարկում, բայց և այնպես թեքիտաղցիք համաձայնում են, մտածելով թե կգա և կմնա իրենց մոտ: Ընտրվելուց հետո, սակայն, նա հրաժարվում է գավառում առաջնորդ լինելուց, որովհետև, ինչպես Սըվաճյանն է սրամտում, «իր ազգասիրությունը չպիտի հանգե» մեկ գավառի հայերին «բարիք ընելով»³³:

Գալֆայանը 1863 թ. լույս ընծայեց իր բանաստեղծությունների ժողովածուն «Վարդենիք» խորագրով, ուր սիրո անվան տակ արտահայտեց էրոտիկ տրամադրություններ՝ առաջ բերելով Նալբանդյանի վրդովմունքը: Վերջինիս էր արձագանքում Սըվաճյանը, երբ հեգնանքով գրում էր. «Պոլսի երիտասարդները միահամուռ կը խնդրեն իրմե որ իր Վարդենիք անուն տաղերգությունը մաս-մաս նորեն հրատարակի...», ինչպես և «Ֆրանսացի կիներե և օրիորդներն ընդունված բանաստեղծությունները թարգմանե...»: Նույն թվականի հունիսին գրած «խորեն եպիսկոպոս» հոդվածում³⁴ Սըվաճյանը նորից է անդրադառնում կղերական այս գործչին և կծու ծաղրի ենթարկում նրա վարքագիծը:

Սուր ծաղրի միջոցով Սըվաճյանը բացահայտել է կղերապահականության ոեակցիայի հակաժողովրդական էությունը: Մարտական, հարձակողական ոգով տոգորված հեղափոխական-դեմոկրատը անխնա մերկացրել է ժողովրդի թշնամիներին և ճանապարհ հարթել դեմոկրատական շարժման համար:

³³ «Մեղու», 1872, № 77, էջ 2:

³⁴ Նույն տեղում, № 87:

САТИРА АРУТЮНА СВАЧЯНА

(К 150-летию со дня рождения)

Г. А. САРКИСЯН

(Резюме)

Статья посвящена анализу сатиры видного армянского революционного демократа, редактора журнала «Мегу» («Пчела») Арутюна Сваच्याна. Выявлены идейно-художественные тенденции сатиры Сваच्याна, связанные с его публицистической деятельностью. Анализируются сперва сатирические произведения ранних лет, которые имеют преимущественно бытописательный характер, а затем памфлеты, относящиеся к зрелому периоду его творчества, в которых затронуты вопросы социально-политической жизни. Воинствующий публицист здесь оружием сатиры бичует реакционную деятельность представителей клерикально-консервативного течения—Г. Чамурчяна, Г. Айвазовского и Х. Галфаяна, следуя в обрисовке их образов остроте и идейной направленности налбандяновской сатиры.